Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ԱՌ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ

ԱԶԳ· ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

30 ԱՊՐԻԼ 1871

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ· ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

Կ· ՊՕԼԻՍ

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ ԽԱՆ ԹԻՒ 4—5

—1871—

369
Ա-23

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ԱՌ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

30 ԱՊՐԻԼ 1871

Երբ նախորդ Տնտեսական խորհուրդն տարաժամ իւր պաշտօնէն հրաժեշտ տուաւ, Պատկառելի ժողովդ նոր Տնտեսական խորհուրդ մը վերակազմեց, և անոր յանձնեց նախորդին պաշտօնն շարունակել. հետևապէս նորընտիր խորհուրդն յունվար 19 ին իւր պաշտօնին գլուխն անցաւ։

Թէև սահմանադրապէս Տնտես. խորհրդոյ պաշտօնը ընդհանուր փէչ-ֆիւ-ն էր և չէ թէ մ-ոգ-ի-ոս-ֆիւ-ն, որ երևմտից հոգաբարձութեան բաժինն է Տնտեսական խորհրդոյ հսկողութեան ներքև, սակայն այս հոգաբարձութիւնն գոյութիւն չուներ, և վարչական պարագաներն այնպէս բերեր էին որ Տնտես. խորհրդոյ պաշտօնը տեսչութեան մէջ չէր կեդրոնացած, այլ իւր վրայ ծանրացած էր կեդր. սընտուկին մատակարարութեան և համարակալութեան բոլոր հոգը։

Նախորդ Տնտես. խորհուրդն իրաց այս վիճակին առջև ստիպուեր էր մատակարարութեան պաշտօնն վարել և իր ընդհանուր տեսչութեան իրաւունքն 'ի հարկին միայն գործադրել։ Նորընտիր Տնտեսական խորհուրդն Քաղ. ժողովէդ իւր պաշտօնին վերաբերեալ հրահանգն ընդունելէ ետև՝ ստիպուեցաւ մի և նոյն ուղղութիւնը տալ նաև իւր ընթացքին, մանաւանդ որ տարբեր ճամբայ մը կարելի չէր բռնել այնքան սուղ միջոցի մը մէջ՝ որ իւր պաշտօնատարութեան պայմանաժամը կը գծէր. և միւս կողմէ Տնտես. խորհրդոյ առջև Ազգային երևմտից խնդիրը կար անմիջական հոգածութեան կարօտ։

Այսպէս Տնտես. խորհուրդն իւր ընթացքը գծելէ և դիւանը կազմելէ ետև՝ փութաց տեղեկութիւն ստանալու իւր նախորդին գործառնութեանց վրայ, հետևապէս հրաժարեալ խորհուրդն իւր տեղեկագիրն ու հաշուեցոյցն հաղորդեց 'ի պաշտօնէ, որոց աւասիկ պատճէնները։

Ամենապատիւ Ս. Պատրիարքը Հայր Նախագահ Ազգ. Քաղաքական ժողովոյ.

Հրաժարեալ Ազգ. Տնտես. խորհուրդը երթէ յապաղեցաւ մինչև այսօր անցեալ նոյեմբերէն 'ի վեր շարունակ կրկնած հրաժարականին վերջապէս ընդունելութիւն գտնելուն համար իր չնորհակալութիւնը և իւր պաշտօնավարութեան համարատուութիւնը պատկառելի ժողովոյդ մատուցանել, պատճառը գլխաւորաբար իւր Ատենապետին վերահաս հիւանդութիւնն էր։ Կը յուսանք թէ այս բնական պատճառը ներողամտութեան կարժանանայ անշուշտ։

Տնտեսական խորհուրդը պաշտօնէ քաշուած է նախընթաց յունուարի 18 ին, յորում իւր յաջորդին յանձնած և վերածած է օրինաւորապէս ազգային հաշուական, երևմտական և վերջապէս Տնտես. խորհրդոյ վերաբերեալ ամեն բան, և այժմ ալ պատիւ ունի իւր պաշտօնավարութիւնը համառօտիւ տեղեկագրել ներկայիս պատկառելի ժողովոյդ։

Տնտեսական խորհուրդը՝ ինչպէս իր կազմութեան ատեն պայմանադրած էր, Կեդր. երևմտական և հաշուական ընթացիկ գործերը հոգալէ զատ՝ իր պաշտօնին վերաբերեալ պատահական և ստիպողական գործերն ալ տնօրինելու անհրաժեշտ չ'մնաց։

Ասոնցմէ գլխաւորներն էին։

Ա. Ազգային Կեդր. ուղղակի տրոց հաւաքման ձեռնարկել, և զայն յառաջ վարել՝ որ 'ի

Նախորդ Տնտես. Տեղեկագիրն — Հ—

սկզբան ժողովրդեան անվարժութեամբը բաւական դժուարութիւններ ունէր ։

Բ· Էյուպի Ս· Եղիա թաղին Ազգ· վարժարանաց կտակեալ՝ բայց յետոյ դժուարութեանց ներքև ինկած 100 օսմանեան լիրան ձեռք բերել ։

Գ· Տիգրանեան Մկրտիչ եպիսկոպոսի և Էյուպի Ս· Աստուածածնայ թաղին նախորդ թաղ· խորհրդոյն խառնաշփոթ և բազմակնճիռն հաշիւները քննել և լուծել ։

Դ· Կէտիկ բաշայի, Գուզկունճուգի և Օրթագիւղի թաղ· խորհրդոց ազգային կալուածոց վաճառման վերաբերեալ առաջարկութիւնները քննել ։

Ե· Հիւանդանոցի կալուածներէն 1851 էն Պըյըքլըեան Մկրտիչի ծախուած կէս տան խնդիրը պարզել ։

Զ· 1863 թուականին Քղեցւոց Կեդր. սնտուկի մէջ առանդ թողած 9000 ղ·ի խնդիրը պարզել, և այս գումարէն Ս· Էնֆիյէճեանի փոխ տրուած 7300 ղ·ը գանձել ։

Եւ խել մը զանազան գործեր, զորս աստ թուել աւելորդ կը համարիմք, զի իւր ատենագրութեանց մէջ մանրամասնօրէն արձանագրուած են, և 'ի հարկին կրնան քննուիլ ։

Գալով հաշուեկշռի, ըստ որում Պատրիարքարանի հաշուական տարին Մայիսէ Մայիս կը չափուի, բայց մեր հրաժեշտը այդ ժամանակէն երեք ու կէս ամսոք չափ յառաջ տեղի ունենալով՝ անկանոն և անտեղի կ'ըլլար Կեդր· հաշուետումարաց մէջ բոլոր հաշիւները գոցել անժամանակ և վերստին բանալ, ուստի Տընտեսական խորհուրդը իւր պաշտօնէ քաշուած օրը (18 յունուար 1871) փորձակշիռ մը պատրաստելով յանձնած է իր յաջորդին, յապացոյց անժխտելի մինչև նոյն թուականի հաշուոց կանոնաւորապէս և ճշդապէս հաշուեմատեանից մէջ անցած ըլլալուն ։

Յիշեալ փորձակշռէն զատ, որոյ մէկ պատճէնը ներփակեալ կը մատուցուի պատկառելի ժողովոյդ, հրաժարեալ Տնտես· Խորհուրդը փափաքելով որոշ գաղափար մը տալ թէ՛ Վարչութեան և թէ՛ ազգայնոց՝ իւր պաշտօնավարութեան միջոցի ելումուտքին վրայ, անոր ամփոփ մէկ պատկերը պատրաստեց սնտուկի տումարէն քաղելով, որոյ պատճէնն ալ նմանապէս կը հաղորդէ ժողովիդ ։

Այս հաշուոյ ամփոփութեան մէջ՝ 1870 մայիսի սկիզբէն մինչև 1871 յունուար 18 Կեդր· սնտուկի մտից և ելից ամբողջը իւր տեսակներով կը ներկայանայ, և հոն կ'երևի որ Պատրիարքարանի ու Վարչութեան սովորական ծախքերն ու պէտքերն հոգացուելէ զատ՝ 65438 1/2 ղ· ալ հին պարտուց վճարք եղած է յիշեալ միջոցի մէջ ։

Հարկ կ'ըլլայ հոս դիտել թէ պաշտօնէից ընդհանուր թոշակը մինչև 1871 յունվար 105,000 ղ· կընէ, բայց ընդ ամենը, ինչպէս կ'երևի պատկերին մէջ, 87,594 ղ· վճարուած ըլլալով, պաշտօնէից թոշակէն 17,406 ղ· նմանապէս և Քղեցւոց հաշուոյն 7,300 ղ· գանձուած ու միայն 5,750 ղ· իրենց վճարուած ըլլալով, այս հաշուէն ալ 1,550 ղ· պարտք թողած կ'ըլլայ թէև Տնտես· Խորհուրդն իր յաջորդին, բայց ասոնց փոխարէն նորընտիր Տնտես· Խորհրդին համար առնելիք են՝ Հիւնքեարպէյէնտեան Արժ· Տ· Յովհաննէս հոր փոխ տրուած 3,395 ղ·ը, Մուպահեաճեանի սէքէսթրոի համար տրուած 150 ղ·ը, և ասոնցմէ զատ մատակարարութեան հաշուէն 9,998 ղ· որ յունուար ամսէն սկսեալ հաշուակցելի է մատակարարութեան, նաև Ս· Պատրիարք Հօր ձեռք դեկտ· ամսոյ սկիզբէն 'ի վեր հաւաքեալ մուքաթայից հատոյթն ալ կայ, որուն հաշիւը Տնտես· Խորհուրդը չ'կրցաւ ընդունիլ մինչև իւր հրաժեշտի թուականը ։

Այս բացատրութենէն ետև՝ կը յաւելունք թէ մեր կարծիքն է որ ելումտից այսպիսի պատկեր մը աւելի իմանալի կըլլայ, քան թէ տարեկան հաշուեկշիռ մը, մասնաւորապէս մեր Ազգ· Կեդրոնական հաշուոց համար, քանի որ Կեդր· հաշուետումարք կասկածելի առնելիքներով, մեծաւ մասամբ տարեկան անվճար հատոյթներով և զանազան թուական եթէ գումարներով բեռնաւորեալ են, և որուն հաշուեկշիռը բնապէս թուական՝ բայց ոչ էական վիճակ մը կը ներկայացնէ միշտ, ինչպէս որ եթէ մեր պաշտօնէ քաշուած օրն ալ սովորական հաշուեկշիռ մը պատրաստէինք, 120,00 ղ·ի մօտ մեծաւ մասամբ անուանական յաւելեալ շահ մը ցոյց տրուած պիտի լինէր մեր պաշտօնավարութեան օրով ։

Հրաժարեալ Տնտես· Խորհուրդը բարեբաղդ կը համարի զինքը եթէ կրցաւ երբէք դոյզն ծառայութիւն մը մատուցանել իւր ամենասիրելի Ազգին, որոյ միշտ անձնուէր ։

Մնամ խորին յարգանօք

Ազգ· Վարչ· հրաժարեալ

Տնտես· խորհրդոյ

Ատենապետ

Յ· Հ· ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ

9 Մարտ 1871

Ղալաթիա

(Ստորագրութիւն)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄՏԻՑԵԻ ԵԼԻՑ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Ի 1 ՄԱՅԻՍԷ 1870 ՄԻՆՉԵՒ 18 ՅՈՒՆՎԱՐ 1871

ՄՈՒՏՔ

Անցագրատան՝ Վաղքի հասոյթ	77514	
Իհթիսապի »	43728	121242
Նշանտուութեան՝ նշանի »	76568 20	
» ետ նշանի »	3125	
» հրամանի »	19785	99378 20
Տարեկան հասոյթ, մուգաթայէ	23027	
քանչելէրէ	11036 30	34063 30
Դիւանական հասոյթ		3533
Նախորդ Տնտ. խորհրդոյ նուիրատուութեան մնացորդ հաշիւներէն	1319	
Ս. Պատրիարքի հանգանակութենէ	23880	
Կեդրոնական տրոց հաւաքմանէ	44050	69249
Ընդհ. ժողովոյ Ատենագրութեանց տետրակներու վաճառմանէ		856
Քղեցւոց հաշոյն համար Ս. Էնֆիյէճեանէ		7300
Ընդհանուր պարտականներէ հաւաքումն		15520
Զանազան հաշիւներէ դոյացեալ շահ		483 20
		351625 30

ԵԼՔ

Պատրիարքարանի Պաշտօնէից թոշակ		87594
» Մատակարարութեան		50140 10
Ընդհ. ծախք. Նամակ, հեռագիր և այլն	3846 30	
Նշանի խաչ, տուփ, կոնդակ	9709 20	
Դիւանական պիտոյք, թուղթ, գրիչ, և այլն	2961 20	
Երթևեկութիւնք Ս. Պատրիարքի	11351 20	
Ս. Պատրիարքի անձնական ծախք	4262 20	
Կարասիք Պատրիարքարանի	1324	
Ներդուութիւնք Պորքրանի. և փոխադրութիւն	2527 30	
Տպագրութիւն, տոմսակք, անդորրագիր	2103	
Պատրիարքական հանգանակութեան տասանորդ	1395	
Լրագրաց բաժանորդագինք	766	
Ալյ և այլք և պատահական ծախք	6180 10	46427 30
Կարօտեալ թաղ. Պէպէքի քահանային ամսական	700	
Ըէմէզանիյէի նուէր	707	
Տրոց հաւաքչաց տասանորդ, և այլն	4554 20	
Ընդհանուր ժողովոյ Ատենագրութիւնք	7113	13074 20
Հիւանդանոցի հոգաբարձութեան վճարք		79216 10
Քղեցւոց առ հաշիւ վճարումն		5750
Ընդհանուր պարտատերաց վճարք		65438 20
Մուսահեանճեանի սէքէսթքոին համար		150
Հիւնքեարպէյէնտեան Տ. Յովհանէս քահանային փոխատուութիւն		3395
Սնտուկը պատրաստ դրամ		439 20
		351625 30

Ցնտեսական խորհուրդն իր պաշտօնի անցած օրէն՝ իւր ուշադրութիւնը կեդրոնական ենտուկի եղեմտից վիճակին վրայ դարձուցած՝ տրոց խնդիրը ձեռք առաւ։

Նախորդ Ցնտես. խորհրդոյ կողմէ դործադրութեան մէջ դրուած ծրագրի մը համաձայն անոր ութ ու կէս ամսուան պաշտօնատարութեան միջոցին մէջ 44,050 ղշ. դումար մը դոյացեր էր տրոց հաւաքումէն։

Այս հաւաքումն արդիւնաւոր գործելու միջոցներուն վրայ Ցնտես. խորհուրդը քաղ. ժողովոյ հետ ընդ երկար խորհրդակցելէ ետև՝ որոշեց նաև,

1. Կեդր. ուղղակի տուրքը թաղ. խորհրդոյ միջոցաւ հաւաքել, կամ իրենց մէջէն կամ իրենցմէ ընտրեալ թաղեցի 2—3 ձեռնհաս ազգայիններէ բաղկացեալ յանձնախմբի մը միջոցաւ, որոնք ուղղակի յարաբերութիւն և թղթակցութիւն պիտի ունենան Ցնտես. խորհրդոյ հետ, պէտք եղածին չափ ընկալագիրներ պիտի ստանան անկէ, և անոր կողմէ եկած գործակալին հաշիւներն պիտի տեսնեն։

2. Իւրաքանչիւր շահու տէր ազգայիններէ 75 ղշ.ի օրինաւոր տուրքը հաւաքել, և այս դումարը վճարելու անկարողներէ 25 ղշ.ի բաց առեալ բոլորովին անկարողներն։ Այս կարգի անձինքը թաղ. խորհուրդք պիտի որոշեն, բայց ըստ ամենայնի արդարութեամբ, զի պատասխանատուութիւն յանձն առած պիտի ըլլան իրենց վրայ։

3. Իրենց թաղին մէջ բնակող այն ազգայնոց՝ որոնց կարողութիւնը ծանուցեալ է 75 ղշ.էն վեր տուրք տալու, անունները ցանկով մը պիտի հաղորդեն Ցնտես. խորհրդոյ. որպէս զի յատուկ նամակաւ հրաւիրուին իրենց տարեկան տրոց քանակութիւնը՝ իրենց կարողութեան չափովը որոշել։

4. Իւրաքանչիւր թաղ. խորհրդոյ միջոցաւ հաւաքուած գումարին տասանորդը իրեն պիտի թողուի, որ կրնայ կամ թաղ. ենտուկին սեպհականել և կամ իր գործածած հաւաքիչներուն վճարել, ինչպէս որ արժան կը տեսնէ։

5. Իսկ եթէ պատահի Ազգային մը որ անփոյթ դտնուի իւր տրոց վճարման, թաղական խորհուրդներն կամ ուղղակի իրենք կամ Եկեղեցականաց միջոցաւ այնպիսին պիտի յորդորեն, և եթէ յամառի պարտադանց պիտի համարուի, և սահմանադրապէս ղրկեալ իր ամեն ազգային իրաւունքներէն. ուստի ղրկեալ պիտի ըլլայ նաև Ազգային Դիւանատանց ժանդակութիւնը վայելելէ։ Հետևաբար երբ գործով մը թաղ. խորհրդոյն ներկայանայ, բաց 'ի հոգևոր մատակարարութենէ՝ ուրիշ ամեն պիտոյից մէջ նախ իր տուրքը վճարելու պիտի հրաւիրուի և ապա լսելի պիտի ըլլայ իւր խնդիրը թաղ. խորհրդոյ կողմէ։

Այս տնօրէնութիւններն Մայրաքաղաքիս թաղ. խորհրդոյ Պատրիարքական շրջաբերականաւ (փետրվար 16) ծանուցուեցան 'ի գործադրութիւն։

Ցնտեսական խորհուրդն իրաւունք ունէր յուսալու որ թաղ. խորհուրդներն վարչութեան ջանից մուտադիր կը գործակցին կեդրոնական ենտուկին վիճակն'ի լաւ անդր շրջելու, սակայն սպասուած աջակցութիւնը, ինչպէս արժան էր և կը պահանջէր խնդրոյն կարևորութիւնն ու փափկութիւնը, չ'գտաւ թաղ. խորհրդոյ կողմէ, որոնք մանաւանդ դիւրութեան համար հրահանգ ընդունած էին իւրաքանչիւրն իւր թաղին շրջանակին մէջ յանձնախումբեր կազմելու և այս եղանակաւ հաւաքման գործն յառաջ վարելու։ Ի զուր Ցնտեսական խորհուրդն իւր շրջաբերականաւ (ապրիլ 1) թաղ. խորհրդոյ յիշեցուց այն ճնասակար հետևութիւններն, զորս ազգին եղեմտական վիճակին լքումը յառաջ կրնար բերել, և 'ի զուր անոնցմէ ազգու գործակցութիւն մը խնդրեց, իրաց վիճակը միշտ մի և նոյնը մնաց։

Այս վիճակը աւելի խօսուն որոշ կերպով կը բացատրէ հետագայ ցուցակը, որ թաղ. խորհրդոյ միջոցաւ մինչև ապրիլ վերջ հաւաքուած տրոց քանակութիւնը ցոյց կուտայ։

ՑՈՒՑԱԿ

700 ղշ.	Բէրա
125 »	Իսկիւտար Եէնի-մահալլէ
825 »	Վերածելի։

825	ղշ.	Վերածեալ
450	»	Միջագիւղ
175	»	Էյուպ Ս. Եղիա
200	»	» Ս. Աստուածածին
400	»	Կէտիկ բաշայ
450	»	Իւսկիւտար Ս. Խաչ
850	«	Թօփ-գաբու
500	»	Խասգիւղ
225	»	Գարակէօմրիւկ
1700	»	Մայր Եկեղեցի

5775 ՂՐՇ. Համագումար.

Իսկ Տնտեսական Խորհուրդն՝ որ տրոց հաւաքման գործին մէջ միայն Թաղ. խորհրդոց աջակցութեան կոչնած չէր. առջի օրէն ինքն ուղղակի այլ և այլ միջոցներ ձեռք առաւ իւր նպատակին հասնելու համար։

Այս միջոցներուն շնորհիւ կրցաւ իւր սակաւօրեայ պաշտօնատարութեան շրջանին մէջ, այսինքն յունվար 19 էն մինչև ապրիլ 30 ընդհանուր տուրքէն 24985 ղշ. հաւաքել և մատակարարել Պատրիարքարանի այլ և այլ ստիպողական պիտոյքները, ինչպէս իւր հաշուեցոյցին մէջ կերևի։ Այս եղանակաւ հաւաքման ամբողջ արդիւնքն եղաւ 30750 ղշ. իւր պաշտօնատարութեան մէջ։ Իսկ ընդհանուր գումարը նախորդ Տնտես. Խորհրդոյ օրով եղած հաւաքումն ալ մէկտեղ առնելով 74800 ղրշ.ի կը յանգի։ Տարակոյս չկայ թէ այս գումարը կը բաղմապատկէր, եթէ Թաղ. խորհուրդներն ալ վարչութեան ակնկալութեան պատասխանէին, եթէ վերջապէս Տնտես. Խորհրդոյն պաշտօնատարութեան շրջանը կարճ միջոցի մը մէջ չ'աւարտէր։ Եւ ըստ սրում՝ մայիս 1 ին Պատրիարքարանի հաշուական տարեգլուխը կ'սկսէր, Տնտես. Խորհուրդն հարկ տեսաւ որ երբ մէկ կողմէ՝ անցեալ տարուան մնացորդ տրոց հաւաքումն շարունակուի, միւս կողմէ՝ նոր տարիին ալ սկսուի մի և նոյն պայմաններով. մինչև որ ազգային բարձրագոյն ատեանն նոր տնօրէնութիւն մը ընէ այս մասին և գործադրութեան դրուի։

Տնտեսական Խորհուրդն տրոց վիճակին վրայ իւր տուած տեղեկութիւններն կնքելու ատեն՝ չ'ուզեր մէկին ճշմարտութիւն մը անյիշատակ թողուլ և անցնիլ։

Հասարակութիւնն սկսած է հետզհետէ ընտելանալ այս սահմանադրական տրոց, և ինչպէս իւր բարեպաշտական նուէրներն, և անուղղակի տուրքերն յօժարակամութիւն՝ նոյնպէս և ընդհանուր տուրքը, առանց դեղևելու կը վճարէ երբ պահանջուի իրմէ օրինաւորութեան պայմաններով։ Հետևապէս և ոչ մէկ ազգային պաշտօնական մարմին, այս մասին իւր զանցառութիւնն, եթէ ըրած է, ի չքմեղս հանելու համար իրաւունք ունի զայն հասարակութեան վերագրել։

Հին պարտուց խնդիր.

Տնտես. Խորհուրդը ուշադրութեան առաւ նաև Ազգային հին պարտուց խնդիրը, և ասոր վճարման համար զանազան եղանակներ մտածելէն ետև, ժողովուրդը աւելի տուրք քան թէ պարտք տալու վարժեցնելու նպատակաւ առաջարկեց ժողովոյդ, որ վարչութիւնը բոլոր ուժովը կեդր. տրոց հաւաքման եղանակներուն դիմէ, և այսպէս հաւաքեալ ուղղակի տրոց կէսը պարտուց վճարման յատկանայ, մասնաւորապէս կազմուած պարտուց Ցանձնախմբի մը միջոցաւ։ Այս խնդիրը իվերջէ ազգային ընդհ. ժողովոյ ատեանն ելնելով՝ ինչպէս Տնտես. Խորհուրդն առջի օրէն առաջարկած էր, իւր լուծումն ընդունեց և պարտուց խնդրոյն կարգադրութիւնն յանձնուեցաւ Ազգային վարչութեան։

Փոխառութիւն.

Երբ Ս. Զատկի մօտակայ օրերուն մէջ կեդր. Սնտուկի հասոյթներն՝ ինչպէս բնականաբար ամեն տարի կը պատահէր, սկսան նուազիլ և հերիք չեղան Պատրիարքարանի սովորական ծախքերն և քաղաքական ժողովոյդ կողմէ հրամայուած վարչական արտաքոյ կարգի ծախք մը մատակարարելու, Տնտես. Խորհուրդն ձեռնթափ չվհատեցաւ այս նեղ պարագային մէջ, հետևապէս քաղաքական ժողովոյդ հաւանութիւնն ընդունելէ յետոյ Ազգային գործոց 200 Օսմանեան լիրայի փոխառութիւն մը ըրաւ (մարտ 22 և 26) յանուն կեդր. Սնտուկին և իւր անձնական երաշխաւորութեան ներքև։

Այս փոխառութեան վճարման եռա-

նակը արդէն գծուած և թերհաշիւ 60 Օ. Լ. վճարք եղած է։

Ծննդոց և վախճանմանց փոյր.

Ասկէ քանի մը տարի առաջ որոշուեր էր որ Մայրաքաղաքիս թաղերու մէջ պատահած ծննդոց և վախճանմանց համար ըստ աստիճանի անուղղակի տուրք մը առնուի 'ի նպաստ կեդր. ընտուկին։ Այս որոշումն ժամանակ մը գործադրուեր էր Մայրաքաղաքիս Եկեղեցեաց մէջ, սակայն 'ի վերջոյ խանդարուեր և դադրեր էր։ Այս ընդհատեալ տուրքը՝ որ եթէ խնամօք մշակուէր հաւանական հաշուով տարին առնուազն 20,000 ղշ. ի մօտ հասութի դումար մը կ'արտադրէր. չարունակելու համար Ցնտես. խորհուրդն՝ Քաղ. ժողովոյդ հաւանութիւնն ստանալէ ետև՝ անոր հրահանգին համեմատ 5, 10, 20 և 50 ղշ. նոց անդորագրեր տպագրել տուաւ և Պատրիարքական շրջաբերականաւ (3 փետր.) Մայրաքաղաքիս թաղ. խորհրդոց յուղարկեց 'ի գործադրութիւն։ Այս առթիւ Ցնտես. խորհուրդն սոյն տրոց վերաբերեալ հին հաշիւներն առաւ մէկ քանի թաղ. խորհուրդներէն, և անոնց քով գտնուած հին անդորագրերն ջնջեց։ Աւելորդ չէ յայտնել որ թաղ. խորհուրդներէն ոմանք այլ և այլ դժուարութիւններ յարուցին այս տրոց գործադրութեան առթիւ, որոնցմէ մին Քաղ. ժողովոյդ կողմէ աղդարարութիւն ընդունեց իւր այս ընթացքից համար։

Անդորագրոց.

Ցնտես. խորհուրդն նկատելով որ թաղական խորհրդոց ոմանց կողմէ կալուածական առուծախի գործողութեանց համար ստէպ թերի էջմ-խաղերներ կը տրուին, և ասկէ այլ և այլ զեղծումներ տեղի կ'ունենան, ասոնց բարձմանն համար ինչ ինչ բարեկարգութիւններ մըտածեց և զանոնք Քաղ. ժողովոյդ յայտագրեց 'ի գործադրութիւն։

Աշխատանքի ոմանք.

Ստոյգ է որ Ազգ. Դիւանատունն մէկ քանի ձեռնհաս պաշտօնեայներ ունէր. սակայն անոնց արժանեաց և աշխատութեանց նկատմամբ անբաւական էին վճարուած ամսականներն, և անոնց եռանդն ու գործունէութիւնը վառ պահելու համար հարկ էր ամսականաց վրայ չափաւոր վերադիր մ'ընել, հետևապէս Ցնտեսական խորհուրդն այս մտօք առաջարկութիւն մը ներկայացուց Քաղ. ժողովոյդ։ Ասոր հարկաւորութիւնն նոյն իսկ ժողովդ արդէն ղգացած՝ ինչ ինչ փոփոխութեամբ այս առաջարկութիւնն ընդունեց և գործադրութիւնն հրամայեց Ցնտես. խորհրդոյ։

Նախկին Տեղապահ Արիստակէս Սրբազանի եկեղեցական կեդրոնը.

Ցնտես. խորհուրդն ուրիշ սչինչ նուազ կարևոր հարկ մ'ալ ղգաց։ Քանի քանի անգամ նախորդ վարչութեան օրով խընդիր յուղուեր էր. նախկին Տեղապահ Արիստակէս Սրբազանի, Եկեղեցւոյն և Ազգին անձնուէր այս ալևոր Եկեղեցականին կեդր. ընտուկէն ամսական մը սահմանելու, և սակայն միշտ առկախ մնացեր էր այս խնդիրը, խնդիր մը՝ որ իրաւամբ ժողովրդեան հանրական փափաքը դարձած էր։ Գեր. Արիստակէս Սրբազան թէև մարմնով վատառողջ, բայց Ազգային գործոց անկերպարան վիճակին մէջ Ազգին կարևոր ծառայութիւններ մատուցանելէ ետև՝ լռիկ քաշուեր էր պաշտօնէ և չքաւորութեան մէջ իւր կենաց մնացորդը կ'սպառէր անմռունչ համակերպելով իւր վիճակին։ Ցնտես. խորհուրդն անձնուրացութեամբ Ազգին ծառայող պաշտօնեայները քաջալերելու և անոնց պէտք եղած երախտագիտական հարկն մատուցանելու սկզբունքով Քաղ. ժողովոյդ առաջարկեց որ այս բարձրաստիճան եկեղեցականին 1000 ղշ. ամսական մը սահմանուի Ազգային Ընտուկէն։ Քաղ. ժողովդ այս առաջարկութիւնն արդարութեան համաձայն գտաւ և հրահանգ ուղղեց Ցնտես. խորհրդոյն որ յառաջիկայ տարւոյն հաշուէկշռոյն մէջ անցնէ զայն։

Պ. Հէրման Օբէնհայմ նոր.

Սեղանաւոր Պ. Հէրման Օբէնհայմ ասկէց 12-14 տարի առաջ Պոլիս գտնուած ատեն՝ 10,000 ֆրանքի դումար մը կը նուիրէ 'ի նպաստ Հայոց Հիւանդանոցին և զայն ծանօթ ազդայնոյ մը կը յանձնէ այս նպատակին հասցնելու համար։ Սակայն մարդասէր նուիրատուին կամաց հակառակ այս դումարը չ'յանձնուիր Ազգին, և Պատրիարքարանը բոլորովին անծանօթ կը մընայ այս իրողութեան, մինչև որ 1869 թուականին Պ. Հէրման Օբէնհայմ փարիզէն՝ Պոլսոյ Ալպէրթի Քուրթօ և Ընկերութեան հրաման կ'ընէ որ՝ պաշտօնապէս ստուգէ

թէ յիշեալ գումարն իւր նպատակին հասա՞ծ է թէ ոչ։ Այս պարագայով խնդիրը յանկարծ երևան կ'ելնէ, ժամանակին Տընտես. Խորհրդոյն կը ներկայանայ, որ մէկ կողմէ կեդրոնական տուժարները կը քննէ և ըստ այնմ բացասական պատասխան կուտայ, և միւս կողմէ այս անյայտ գումարը ձեռք բերելու կը նկրտի, և մինչև իւր հրաժարած օրերն այս նպատակաւ այլ և այլ միջոցներ 'ի գործ կը դնէ։ Արդի Տնտեսական Խորհուրդն ալ մի և նոյն ջանքերն շարունակել սկսաւ. սակայն դեռ ևս չ'կրցաւ վճռական արդիւնք մը ձեռք բերել, և սակայն հարկ համարեց այս խնդիրը՝ որ ցարդ թագուն կը մնար, 'ի վեր հանել, այնու յուսով որ օրին մէկը Ազգ. Վարչութիւնը կը յաջողի Հիւանդանոցի պատսպարելոց իրաւունքը ձեռք բերելու։

Ազգային Հիւանդանոցի կալուածներէն

Ազգային Հիւանդանոցի կալուածներէն Բէրայի Սքօռտէլա փողոցին մէջ գտնուած տան մը կէսը՝ որ աւանդաբար հանգուցեալ Բիւրքճի Համբարձում աղայի անուան վրայ կը գտնուէր, 1851 թուականին ինչպէս կը հաստատեն դիւանական արձանագրութիւններն, Պըյըգլեան Մկրտիչ անուն անձին 4,300 ղուրուշի ծախուեր է, սակայն ինչ ինչ պատճառներով ֆէրմանի կանոնական գործողութիւնը չէ կատարուեր։ Յիշեալ Պըյըգլեան վախճանած ըլլալով՝ անոր չքաւոր այրի կինը նախորդ Տնտեսական Խորհրդոյ օրով խնդիր մատուցեր է որ կամ գնոյ առնուած նոյն կէս տունը ֆէրմանի ըլլայ իրեն և կամ վճարուած ստակը ետ տրուի։ Տնտես. Խորհուրդը յետ քննութեան՝ կնոջ սեպհականութեան իրաւունքը հաստատեր, և սակայն ֆէրմանի գործողութիւնն կատարել տալէ առաջ Հիւանդանոցի Հոգաբարձութեան կարծիքը խնդրեր էր կնոջ երկրորդ առաջարկութեան մասին։ Արդի Տնտես. Խորհուրդն անոր կարծիքն ընդունելէ ետև՝ իւր նախորդին որոշման համաձայն նոյն կէս տունը Պըյըգլեանի այրի կնոջ դարձնել տալու համար պէտք եղած միջոցն 'ի գործ դրաւ։ (18 մարտ).

Թաղ. Խորհրդոյն աշխատութիւնը.

Ղալաթիոյ Թաղական Խորհուրդն եկեղեցւոյն ստկոսաւոր հարիւր լիրայի մէկ պարտքը՝ որու վճարումն ստիպողական դարձած էր, հատուցանելու համար Քաղ. Ժողովոյդ առաջարկեր էր որ եկեղեցւոյն քանի մը կտոր դոհարեղէններն վաճառուին։ Այս առաջարկութիւնը Քաղաքական Ժողովոյդ ընդունելով՝ Տնտեսական Խորհրդոյ կը յանձնէր որ իր հսկողութեան ներքև պարտուպատշաճն 'ի գործ դնէ։ Այս յանձնարարութեան համաձայն՝ Տնտեսական Խորհուրդն նոյն դոհարեղէններն 'ի ներկայութեան անդամոց Թաղ. Խորհրդոյ և քանի մը համազգի արհեստաւորաց 'ի վաճառ հանեց և 11,981 ղուրուշի ծախել տալով՝ (փետր. 25) գոյացեալ գումարը յանձնեց Թաղ. Խորհրդոյն։

Քանտիլլիի Թաղ. Խորհրդոյն

Քանտիլլիի Թաղ. Խորհրդոյն տնտեսական ընթացքին և հաշիւներուն վրայ թաղեցւոց ոմանց կողմէ ինչ ինչ ամբաստանութիւններ եղեր և Տեղական Մասնաժողովոյ տնօրէնութեամբ որոշուեր է անոր հաշիւներն քննութեան ենթարկել։ Տընտեսական Խորհուրդն եղած ամբաստանութեանց վերահասու եղաւ, և երկու կողմանց ներկայութեան քննութիւնը կատարելով՝ տեսաւ որ հաշիւներուն մէջ նենգութիւն մը չ'կայ, և հետևապէս իւր քննութեան արդիւնքը յայտագրեց Քաղաքական ժողովոյդ (Յունվար 26)։

Իսկ. Ս. Խաչ Եկեղեցի Թաղ. Խորհրդոյ հաշիւները.

Քաղ. ժողովն Տնտես. Խորհրդոյ յանձնարարութիւն ըրած էր որ Իսկ. Ս. Խաչ Եկեղեցւոյ հրաժարեալ Թաղ. Խորհրդոյն հաշիւներն իւր յաջորդին յանձնել տայ։ Տնտես. Խորհուրդն այս առթիւ նոյն հաշիւներն 'ի քննին առաւ, և ոչ միայն ապօրինաւորութիւն մը չ'նշմարեց անոնց մէջ, այլ և տեսաւ որ Թաղ. Խորհուրդն տնտեսադիտաբար վարուելով իւր նախորդէն մնացած 30,000 ղուրուշի պարտուց գումարէն 27,000 ղուրուշի չափ վճարած, և միանգամայն ամիսն 850 ղուրուշ եկամուտ բերող երկու նորաշէն կալուած յաւելցուցած է։ Հետևապէս Տնտես. Խորհուրդն հաշուէտումարներն յանձնեց արդի Թաղ. Խորհրդոյն որ դիտողութիւն մը չբրաւ այս մասին. և այս քննութեան արդիւնքը յայտադրեց Քաղաքական ժողովոյդ (Ապրիլ 25)։

Թօփդաբուի նախորդ թաղ. Խորհրդոյ Ատենապետն պաշտօնէ հրաժեշտ տալէն ետև՝ Եկեղեցւոյն կալուածադրերն իւր քով վար դրեր էր և ի՛ընդդիմանար զանոնք Ազգին յանձնելու այլ և այլ բարուրներ մէջ բերելով։ Ցնտես. Խորհուրդն Թօփդաբուի թաղ. Խորհրդոյն խնդրանաց վրայ Քաղաքական ժողովոյդ հետ բանակցութեան մտաւ այս խնդրոյն համար, և ուր ուրեմն նոյն գրաւեալ կալուածադրերն ստանալով՝ թաղ. Խորհրդոյն յանձնեց (ապրիլ 8)։

Ցնտես. Խորհուրդն իւր համարատուութեան տեղեկագրին հետ կը փութայ նաև անցեալ տարուան ընդհանուր հաշուեցոյցը և յառաջիկայ տարուան հաշուէկշիռը (պիւտճէ) ներկայացնել պատկառելի ժողովոյդ. և անոր վրայ ինչ ինչ բացատրութիւններ տալ աստանօր։

Հաշուէցոյցը՝ ինչպէս կ'երևի, երեք մասի բաժնուած է, առաջին մասը կը ներկայացնէ կեդր. սնտուկին այն վիճակը՝ որուն մէջ կը գտնուէր սնտուկը անցեալ 1870 տարւոյ ապրիլ 30 ին. երկրորդ մասը 1870 մայիս 1 էն մինչև 1871 ապրիլ 30 ամբողջ մէկ տարեկան սնտուկին ելմտական գործողութեանց հաշիւներն կը ցրցնէ. իսկ երրորդը կը ներկայացնէ կեդրոնական սնտուկին արդի ընդհանուր վիճակը։ Եւ թէպէտ Ցնտես. Խորհուրդն 1871 յունվար 19 ին իւր պաշտօնին գլուխը անցած էր, և հետևապէս միայն 3 1/2 ամսուան ելմտական գործողութիւններն իրեն կը վերաբերէին, բայց որովհետև նախորդ Ցնտես. Խորհուրդն Պատրիարքարանի հաշուական տարեգլխէն առաջ հրաժարելուն պատճառաւ. միայն փորձակշիռ մը ներկայացուց, և ոչ ընդհանուր հաշուէկշիռ մը, ուստի Ցնտես. Խորհուրդն իւր նախորդին 8 1/2 ամսուան պաշտօնատարութեան շրջանի ելմտական գործողութիւններն իւր գործողութեանց հետ կցեց և զայս ամենը միահաղոյն ներկացոյց հաշուէցոյցին մէջ։

Ուշադրութեան կարօտ ուրիշ գլխաւոր կէտ մ'ալ կայ՝ որ պէտք չէ անյիշատակ անցնիլ։

Հաշուէցոյցին երրորդ մասին մէջ կեդր. սնտուկին 854,531 ղշ. ի պարտուց դէմ, 670,799 ղրշ. Ազգային առնելիք կ'երևի, որ գեղջուելով պարտուց գումարէն 183,732 ղշ. Ազգային բաց պարտք նշանակուած է, սակայն հարկ է գիտնալ որ այս ազգային պահանջման գումարը կասկածելի առնելիքներով, մեծաւ մասամբ անվճար տարեկան հասոյթներով և զանազան թուական գումարներով կազմուած է, հետևապէս միայն թուական նշանակութիւն ունի և ոչ իրական արժէք, ինչպէս նախորդ Ցնտես. Խորհուրդն դիտած է իւր վերջին տեղեկագրին մէջ։

Այս անարժէք թուական գումարներն՝ որ կեդրոնական սնտուկին իրական վիճակը կը կեղծեն և հաշուէտումարներն ընդունայն կը ծանրաբեռնեն, յետ պաշտօնական քննութեան տումարներէն ջնջելու հարկը խիստ զգալի եղած է, և սակայն այս գործը ձեռնհաս ժողովին հրամանին կը կարօտի։

Իսկ գալով հաշուէկշռին (պիւտճէ), արժան կը համարինք համառօտիւ բացատրել թէ յառաջիկայ տարուան ծախքը, ինչպէս կերևի հաշուէկշիռն հաշուէցոյցին հետ բաղդատելով, 200,000 ղուրուշի չափ աւելցած է։ Արդէն պատեհ առիթներու մէջ Ցնտես. Խորհուրդն իմացուցած է Քաղ. ժողովոյ թէ կեդր. սնտուկի արդի վիճակը, արդի ծախքը կրնայ մատակարարել, բայց Պատրիարքարանը ընդհանուր ազգին գոհունակութեան արժանի վիճակի և ընթացքի մը մէջ դէթ ըստ մասին դրած ըլլալու համար այդ վերադիր գումարն հարկաւոր է, որ կեդրոնական ուղղակի տրօք պիտի հայթայթուի, ինչպէս կ'երևի հաշուէկշռէն։

Պատրիարքարանի մատակարարութիւնը ամսական 5000 ղրշի. և տարեկան 60,000 ղրշի. անհրաժեշտ պէտք ունի, այս գումարը Սրբազան Պատրիարք Հօր անձնական ծախուց հետ վերաբերութիւն չունենալով, նորին Սրբազնութեան անձնական ծախուց ալ դոնէ 3000 ղրշ. ամսական այսինքն տարեկան 36,000 ղշ. պէտք է յատկանայ, որով հաշուեցոյցին մէջ երևցած Սրբազան Հօր ձեռամբ ողորմութեան, պարգևի, և այլ զանազան ծախուց 23,924

դշ. ի գումարը բարձուած կ'ըլլայ, տեղն անցնելով 36,000 դշ. ի գումարը նորին Սբրբազնութեան անձնական ծախուց յատկացեալ։

Դիւանատունը կարօտութիւն ունի դիւանապետի մը. որ այժմ չ'կայ, այս պաշտօնեայն բատ Սահմանադրութեան իրեն սեփական պաշտօններն ունի։ Այս պաշտօնէին 2,000 դշ. ամսական յատկացած է։

Դիւանատունը առանձինն իրեն յատուկ միայն մէկ առաջին դիւանադպիր մը ունի Հայերէնի, որ ինչպէս յայտնի է չ'կրնար ամեն թղթակցութեանց հասնիլ, այս պատճառաւ ուրիշ դիւանադպիր մ'ալ յաւելցուցինք 1,000 դշ. ամսականաւ, որպէս զի Դիւանատունը երկու դիւանադպիր և երկու ընդօրինակող ունենալով կարող ըլլայ բոլոր թղթակցութեանց հասնելու։

Դիւանատան Ցաճկերէն թղթակցութեանց ճիւղին մէջ միայն 400 դշ. ամսականաւ ընդօրինակող մը, և Ա. դիւանադպրին 250 դշ. ամսական աւելցուցինք, հետևելով Հայերէնի Ա. դիւանադպրին ամսականին։

Ֆաբու–քէհեասիութեան պաշտօնարանին վիճակը մի և նոյն պահուած է.

Եկեղեցական տեսչութիւնը երկու գրասենեակի բաժնուած է, կամ որ նոյն է Ցընտեսական և Եկեղեցական խորհուրդներու։ Արձանագրութեան Ա. Դիւանադպիրն ունինք արդէն, որ միանգամայն դիւանատան մէջ ուրիշ պաշտօն վարելու ստիպուած է, ասոր երկու ընդօրինակողք (քօփիսթ) սահմանուած են 800 դշ. ամսականաւ. (որուն մէկն այժմ ունինք 300 դշ. ամսականաւ)։

Գանձապահի և Անցագրատան դիւաբադպրի ամսականները 250 ական դշ. վերադրուած են. և օգնական մ'ալ 300 դշ ամսականաւ աւելցած։

Հաշուեկալութեան գրասենեկին՝ հաշուեկալին 250 դշ. վերադրուած և օգնական մը աւելցած է 500 դշ. ամսականաւ։

Գատաստանական տեսչութեան նախագահ Պատրիարքական փոխանորդ Ս. Հոր ամսականին 500 դշ. վերադրութիւնը զգալի պէտք մ'եղած էր։ Նոյնպէս դիւանադպրին ամսական 250 դշ. ի վերադրութիւնը։

Ուսումնական Տեսչութեան դիւանադպիր և վարժարանաց տեսուչ մ'ունենալու պէտքը ինքնին յայտնի է։ Այս դիւանին յատկացած 1300 դշ. ը թէև քիչ, բայց նոր սկզբնաւորութիւն մ'ըրած ըլլալու համար, առ այժմ գոնէ այսչափը պէտք նկատուած է։

Աբդ. ինչպէս կ'երևի մեր տուած տեղեկութիւններէն, երկու բան Ցնտես. խորհրդոյ ուշադրութիւնը գրաւած է։

Ա. Արժանաւոր վարձատրութիւն, որով քանի մը պաշտօնէից ամսականաց վերադրութիւն կ'առաջարկենք, թէև ուրիշ արժանաւորներ ալ կային, բայց զանոնք գալիք տարուան յանձնել պատշաճ համարեցինք։ Այս աւելադրութիւնները 'ի վերջէ վարչութեան որոշմամբ կրնան այս կամ այն պաշտօնէին յարմարիլ ըստ հարկին

Բ. Իրաքանչիւր տեսչութեան այսինքն Եկեղեցական, Գատաստանաց, Ուսմանց տեսչութիւններուն առանձին դիւաններ կազմել առանձին դիւանադպիրներով. փորձը այս պէտքը մեզի խիստ զգալի ըրած է, որ իր մեծ օգուտներն ունի, թէ յիշեալ տեսչութեանց գործոց դիւրութեան, և թէ նոր ի նորոյ կազմուած տեսչութեանց առաջնորդող փորձառու և հմուտ դիւանադպիրներ ունենալու համար։

Եթէ Վանօրէից տեսչութիւնը կազմուի, այն ատեն պէտք պիտի ունենանք յատուկ դիւան մ'ալ անոր համար կազմելու։ Այժմ այս տարուան համար զանց ըրինք, որովհետև ձեռք առնուելիք միջոցները նոր ըլլալով, այդ պաշտօնը դիւանատան մէջ աւելցած գաւառական թղթակցութեանց յատկացած Դիւանապետին կրնայ կատարել։

Նախկին Ցեղապահ Սրբազանի յատկացեալ 1000 դշ. ամսականին պատճառները վերը բացատրուած են արդէն։

Իսկ նամակաց և հեռագրաց պաշտօնական երթևեկութեանց, և այլ պատահական ծախքերը դրեթէ կրկնապատկած են, ասոնց հարկաւորութեանը համար հոս իսկոյն աւելորդ կը համարինք, մա-

նաւանդ խոստովանելով թէ եղած աւելադրութիւնը քիչ է, քան թէ շատ։

Նոր ծախք մ՚ալ աւելցուցած ենք Այդելուց 'ի գաւառս 65,100 ղշ. տարեկան, հաւրկ է արդեօք այս մասին խօսիլ, մինչդեռ գաւառաց խորշերը Այդելուներ և քննիչներ խրկելու հարկը օր օրի կը ծանրանայ։

Այս ամեն ծախուց, ինչպէս արդէն ըսինք, պիտի դիմադրէ կեդրոնական տուրքը։ Արդի ընթացքով տարեկան հարիւր հազար ղշ. ժողովելու վրայ եմք, երբ աւելի կանոնաւորի և Կ. Պոլսոյ մէջ գտնուող ամենայն շահու տէր Ազգայինք սկսին մասնակցիլ տրոց, ոչ միայն տարեկան երկու հարիւր հազար ղշ. ժողովելու հաւանականութիւնը կունենանք, այժմեան հաշուեկշռին բացը գոցելու, այլ և դատարակութեան ամենակարևոր խնդրոյն, 'ի գաւառս Այդելուց և դիւանական այլ պիտոյից ալ կեդրոնական մնտուկը կարող կ՚ըլլայ ձեռնտու ըլլալու, այս բանիս համար պէտք եղածը մի միայն յարատևութիւնն է, և այն ալ այժմեան ձեռք առնուած միջոցներուն անփոփոխ յարատևութիւնը։

Տնտեսական խորհուրդն իւր համարատուութեան տեղեկագիրն կնքելով պարտկը համարի յայտնել որ անոր մէջ միայն իւր գլխաւոր արարքներն նշանակուած են և 'ի բաց թողուած՝ իւր ստանձնած պաշտօնին յարակից հաշուական և ընթացիկ այլ և այլ գործերն, զորս 21 կանոնաւոր նիստերու մէջ տնօրինած է, անդուլ հսկելով Ազգային հաստութիւց պահպանութեան և բարւոք տնտեսութեան վրայ։ Իւր ատենագրութիւններն և հաշուետուութիւնները ամեն ինչ կ՚ամփոփեն և 'ի հարկին կրնան աւելի ընդարձակ տեղեկութիւններ մատակարարել։

Անդամք Տնտեսական Խորհրդոյ.

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ

Ա. ՃՐԻՆԿԵԱՆ Փ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ԳԱՆՁԱՊԵՏ

Յ. ՂԱԶԱՐ Ս. ՀՈՎՍԷՓԵԱՆ

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

(ՊԻՏՃԷ)

ՆԵՐԿԱՑ 1871—1872 ՏԱՐԻՈՑ

			Տ-ր-ի-ն.
Պատրիարքարանի մատակարարութեան համար . . Ամսական	5000		60000
Ս. Պատրիարքի անձնական ծախուց » . . . . »	3000		36000

ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

Դիւանապետ . . . . . »	2000		
Ա. Գրագիր Հայերէնի . . . . . »	1250		
Բ. » » . . . . . »	1000		
2 » » օգնական . . . . . »	800		
Ա. Գրագիր Տաճկերենի . . . . . »	1250		
Բ. » » . . . . . »	1000		
1 » » օգնական . . . . . »	400		
1 Գործակալ Դիւանատան . . . . . »	300		
Ա. Գաբու քեահեայի . . . . . »	2500		
Բ. » » մուավին . . . . . »	1250		
1 Գործակալ Բ. Դրան. . . . . »	300	12050	144600

ԵԼԵՒՄՏԻՑ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

Ա. Արյանագրութեան Գրասենեակ.

Ա. Գրագիր . . . . . »	1000		
2 » օգնական . . . . . »	800		
Գանձապահ . . . . . »	750		
Ա. Գրագիր անցագրատան . . . . . »	750		
1 » օգնական . . . . . »	300		
1 Գործակալ . . . . . »	300	3900	46800

Բ. Հաշուակալութեան Գրասենեակ.

Հաշուակալ . . . . . »	1000		
Հաշուակալի օգնական . . . . . »	500	1500	18000

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

Փոխանորդ Պատրիարքական . . . . . »	1500		
1 Գրագիր . . . . . »	1000		
1 Գործակալ . . . . . »	300		
4 Եպասխմիք 200 ղ. ամսականով . . . . . »	800	3600	43200

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

Գրագիր և տեսուչ . . . . . »	1000		
1 » օգնական . . . . . »	300	1300	15600

ՉԱՆԱՉԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՔ

Բօսթայի, հեռագրի, նամակ բերողէք	12000	
Դիւանական պիտոյից համար	6000	
Կարասիք Պատրիարքարանի	3000	
Տպագր. տմակք" անդորր" Ը. Ժողովոյ ատենագրութիւնք	18000	
Վերածելի	39000	364200

Վերածեալ	39000	364200
Լյապրաց բաժանորդագինք	1500	
Պէպէքի քահանային յատկացեալ ամսականը . . .	1200	
Նախորդ Տեղապահ Արիստակէս եպիսկոպոսի . .	12000	
Նախկին Գաբու քեահեասի Ալիքսան Էֆէնտիի . .	6000	
Եպասխմիններու հանդերձագին	3000	
Նշանտուութեան ծախուց կէսը	6000	
Ամ և այլ պատահական ծախք	14000	
Ծախք Պաշտօնական Այցելուաց 'ի գաւառս . . .	65100	147900
		512000

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹՔ

Անցագրատան վագրքի հասոյթէ	106000		
Նշանտուութեան հասոյթի կէսը	48000		
Եւ նշանի » »	5000		
Հրամանների հասոյթ	26000		
Դիւանական »	5000		
Տարեկան մուգաթայ	90000		
» քանչէլէր	22000		
Ծննդոց և վախճանմանց հասոյթ	10000	312000	
Տարեկան բացը, որ կէդր. տրուվք պէտք է լցուիլ,		200000	512000

30 Ապրիլ 1871

'ի Պատրիարքարանէ Հայոց Ընդամէնք Տնտեսական Խորհրդոյ.

Կ. Պոլիս. ԳԱՆՁԱՊԵՏ ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ

Տ. ՂԱՋԱՐ Ս. ՀՈՎՍԵՓԵԱՆ Ա. ՖՐԻՆԿԵԱՆ Գ. ՂԱՋԱՐՈՍԵԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԻՃԱԿ 1870 ՏԱՐԻՈՅ ԱՊՐԻԼ 30

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻ

ՊԱՐՏԻ

Զանազանաց՝ հին պարտքեր	830672 12	
» 69 Մայիս 1էն 70 Ապրիլ 30 գոյացեալ պարտք	47530	878202 12

ՊԱՀԱՆՋԻ

Զանազաններէ՝ հին առնելիքներ	614711 19	
Բաց պարտք	263490 33	877202 12

ՀԱՍՈՅԹՔ 1870 ՄԱՅԻՍ 1էն 1871 ԱՊՐԻԼ 30 ԵԼՈՒՄՈՒՏՔ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԵԿԱՆ

Անցագրատան՝ վագրֆի հասոյթ	106444		
» իշխխապի	55296	161740	
Նշանտուութեան՝ նշանի	96850		
» ետ նշանի հասոյթ	10050		
» հրամանի	26975	133875	
Դիւանական հասոյթէ		4822	
Տարեկան » մուքաթայ	93655		
» » քանչէլէր	22200	115855	
Ծննդոց և վախճանմանց հասոյթներէ		495	416787
Նախորդ Տնտես. խորհրդոյ նուիրատուութեան մնացորդ հաշիւներէ		5469	
Ազգային կեդրոնական տուրքէ		74800	
Պատրիարքական հանգանակութենէ		27320	107389
			524376

ԾԱԽՔ

Ընդհ. ամսականներէ՝ պաշտօնէից թոշակք		163560	
Յատկացեալ ծախքէ՝ Պէպէքի քհնյին ամսականը		1300	
Մատակարարութենէ՝ Պատրիարքրնի ներքին ծախք		62691 20	
Ընդհ. ծախքէ՝ նամակ, հեռագիր	6018		
Դիւանական պիտոյք	4632		
Երթևեկութիւն Ս. Պատրիարքի	12232		
Կարասիք, նորոգութիւն և փոխադրութիւն Պատրիարքարանի	9462		
Տոմակք, անդորրագիրք	3965		
Լրագրաց բաժանորդագինք	1015		
Այլ և այլ ծախք	7991		
Եաստախճիներու հանդերձագին	2910		
» երթևեկութեան ծախք	1376 20		
Նուէր Պայրամի Բ. Դրան սպասաւորաց	1914 30		
Ս. Պատրիարքի ձեռամբ ողորմութիւն պարգև և այլն	23924	75440 10	
Նշանտուութեան ծախք, խաչ, տուփ, կոնդակ		13293	316284 30
Տեղապահ Արիստակէս եպիսկոպոսի գահակալութեան առթիւ մէջհէպկէ գրասենեակի միւտիրին		5000	
Ընդհ. ժողովոյ Ատենագրութեանց տպողէք և խմբագրութիւն		11347	
Կեդր. տրոց հաւաքչաց տասանորդ, տոկոսիք ստկի զեն		10210	26547
Հիւանդանոցի հոգաբարձութեան վճարք			101774 20
			444616 10
Յաւելեալ շահ			79759 30
			524376

ԿՇԻՌ 1871 ՄԱՅԻՍ 1

ՊԱՐՏԻ

Զանազանաց՝ հին առնելիքներ		596341 39	
70 Մայիս 1էն 71 Ապրիլ 30 գոյացեալ նոր առնելիք			
Մուքաթայէ	51648		
Քանչէլէրէ	3600		
Նոր գիւղի եկեղեցիէ	13500		
Զանազան անձերէ առնելիք	5710	74458	670799 39
Բաց պարտք			183731 3
			854531 2

ՊԱՀԱՆՋԻ

Զանազաններէ՝ հին պարտքեր		799124 12	
70 Մայիս 1էն 71 Ապրիլ 30 գոյացեալ նոր պարտք			
Պաշտօնէից՝ ի հաշիւ ամսականաց	19590 30		
Մնտուկին ըրած փոխառութեանը համար	17766		
Զանազան անձանց պարտք	18050	55406 30	
			854531 2

ՏԵՍ ՄԱՑՐՀԱՇԻՒ ԵՐԵՍ 221

Printed in Turkey